

**ՀՀ Վայոց ձորի մարզպետը մասնակցել է Արագածոտնի մարզում կազմակերպված 1713-րդ խաչադրման արարողությանը**

20.08.2013



Ս/թ օգոստոսի 17-ին ՀՀ Վայոց ձորի մարզպետ Էդգար Ղազարյանը մասնակցել է „Ապարան,, հայրենակացական միության կողմից ՀՀ Արագածոտնի մարզում կազմակերպված 1713-րդ խաչադրման արարողությանը: Այն տեղի է ունեցել Արագածոտնի մարզում Երևան-Ապարան մայրուղու 33-րդ կիլոմետրի վրա գտնվող Սուրբ Խաչ և Սուրբ Երրորդություն Հույսի Խորան Հաղորդարանում:

Մարզպետին ուղեկցել են մարզպետի տեղակալ Մելս Հարությունյանը, մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Կամո Սահակյանը և պաշտոնատար այլ անձիք:

Միջոցառման ժամանակ կազմակերպվել է նաև վայոցձորյան հյուրասիրություն: